**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ք.Երևան « 25 » ապրիլի 2022թ.

## ՀՐԱՄԱՆ № 195-Ա

## ԱՆՆԱ ԴԱՎԻԹԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 41-27.6-Մ1-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.6-Մ1-2) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 22-ի եզրակացությունը և Աննա Ասատրյանի դիմումը.

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Աննա Դավիթի Ասատրյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.6-Մ1-2) պաշտոնին:
2. Աննա Դավիթի Ասատրյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
3. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2022 թվականի ապրիլի 26:

Recoverable Signature

X 

ՍՏԵՓԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Signed by: DAVTYAN STEPAN 3809890715

**Ս.ԴԱՎԹՅԱՆ**